

ՀԵՇԿ ԺԱՄԱՆԱԿՑՈՑԸ
Մարտ-Նոյեմբեր 2010

Ուրախ ենք յայտնելու, որ Երիտասարդաց Վարիչ՝ Արժ. Տ. Ալետիս Քհնյ. Աբովեանի եւ Հայց. Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութեան Կեդրոնական Խորհուրդի ջանքերով, ՀԵՇԿ այս տարի բաւական գործունէայ է:

Ստորեաւ կը ներկայացնենք տարուան ժամանակացոյցը.-

Ապրիլ 17ին ձեռնարկ Լոս Անճելըսի Սուրբ Յակոբ Հայց. Եկեղեցւոյ մէջ:

Ապրիլ 24-25 Պըրպէնքի Ծուխի Մասնաճիւղ, «Վերապրողներ» խորագրով անապատի մէջ քայլարշաւ ի յիշատակ Հայոց Ցեղասպանութեան Ձոհերուն:

Մայիս 28-31 Մարզախաղեր Ֆրէզնոյի մէջ:

Յուլիս 1-30 «Հայ Քրիստոնէայ Երիտասարդաց Առաքելութիւն Դէպի Հայաստան» ծրագրի երիտասարդներուն ուխտագնացութիւնը դէպի Հայաստան:

Յուլիս 18-24 առաջին շաբաթ Ամառնային ճամբարի

Յուլիս 25-31 երկրորդ շաբաթ Ամառնային ճամբարի

Օգոստոս 1-7 երրորդ շաբաթ Ամառնային ճամբարի

Օգոստոս 8-14 չորրորդ շաբաթ Ամառնային ճամբարի

Օգոստոս 21 Ձեռնարկ՝ Սուրբ Աստուածածին Հայց. Եկեղեցի, Գոսթա Մեսա:

Սեպտեմբեր 11 Օծում Առաջնորդանիստ Մայր Տաճարի, Պըրպէնք:

Սեպտեմբեր 12 Հայրապետական Սուրբ Պատարագ, Առաջնորդանիստ Մայր Տաճար, Պըրպէնք:

Սեպտեմբեր 17-19 ՀԵՇԿ Երէց Մասնաճիւղերու Մարզախաղեր, Պըրպէնք:

Հոկտեմբեր 15-17 ՀԵՇԿ Երէց Մասնաճիւղերու Առանձնացում, Առաջնորդարանի ճամբար:

Նոյեմբեր 26-28 ՀԵՇԿ Տարեկան Համագումար, Սուրբ Աբգար Հայց. Եկեղեցի, Աքացտէյլ, Արիզոնա: